«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Ինտեգրված պարապմունքների կազմակերպումը՝ կարողունակահեն կրթական մոտեցման համատեքստում

Դաստիարակ՝ Լիանա Պետրոսյան

Մանկապարտեզ՝ « ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի Վարդաբլուր գյուղի մանկապարտեզ» ՀՈԱԿ

2023թ.

Բովանդակություն

Ներածություն …….. 2

Գլուխ 1 …….. 4

Ինտեգրված պարապմունքների կազմակերպումը կարողունակահեն կրթական մոտեցման համատեքստում

Գլուխ 2 ……. 7

Ինտեգրված պարապմունքի կազմակերպումը, որպես ճանաչողական, իմացական, սոցիալ հուզական ոլորտների զարգացման միջոց

Դիտորդներ …….. 10

Վերջնաարդյունք …….. 12

Գրականության ցանկ …… 13

Ներածություն

Կրթական համակարգում կատարվող բարեփոխումները պահանջում են նոր մեթոդոլոգիական մոտեցում կազմակերպչական և բովանդակային նշանակության խնդիրների լուծման ժամանակ, որը կնպաստի կրթության որակի բարձրացմանը, որի հիման վրա ստեղծվել են ինտեգրված և համալիր պարապմունքներ, որոնք ժամանակակից ուսուցման մեթոդների նյութերից մեկն են: Կարելի է այս տեսակ պարապմունքները անցկացնել տարբեր առարկաներից: Ինտեգրված պարապմունքները համախմբում են տարբեր առարկաների մասնագետների ուժերը և ստեղծում հարուստ միջառարկայան կապերով պարապմունքի օրինակներ: Սրա նպատակն է ընդգծել ինտեգրված և համալիր ուսուցման նշանակությունը, որակի բարձրացումը կրթության, միջառարկայան կապերի որակի բարձրցումը, առարկայի կամ երևույթի համակողմանի ուսումնասիրումը, շրջապատող միջավայրի գիտակցված ընկալումը՝ երեխաների ճանաչողական գործունեության բազմազան կիրառմամբ: Ինտեգրված պարապմունքի ընթացքում կարելի է ինտեգրել մանկավարժական գործընթացի յուր. բաղադրիչ՝ նպատակ, բովանդակություն, ուսուցման մեթոդ և միջոց: Ինտեգրված պարապմունքի տևողությունը տարբեր է, տարբեր է նաև տևողությունը: Օգտագործվում է երկու կամ երեք պարապմունքի ժամ՝ միավորված մեկ պարապմունքի մեջ: Ցանկացած ինտեգրված պարապմունք նպատակ ունի դուրս գալու մեկ առարկայի նեղ շրջանակից, որի կազմակերպումը կարելի է հաղթահարել մակերեսային և ձևական ուսումնասիրությունը, խորացնել հասկացողությունը, հստակեցնել հասկացողություններն ու օրենքները, միավորել սովորողների փորձը, դրա հիման վրա ըմբռնել տեսական մասը: Սրանք համալիր պարապմունքներ են, որոնք օգտագործում են տարբեր տեսակի գործողություններ՝ արվեստ, արհեստ, մաթեմատիկա, երաժշտություն, ձեռքի աշխատանք, դիզայն: Այս տիպի պարապմունքներին հաջորդում են թեմատիկ պարապմունքները, քանի որ հիմնված են երեխաներին ծանոթ նյութերով: Այս ինտեգրված և համալիր պարապմունքի միջև տարբերությունը այն է, որ բարդ առաջադրանքները լուծվում են համալիրում, իսկ ինտեգրվածում մեկ խնդիր լուծվում է տարբեր գործողությունների ինտեգրմամբ:

Ինտեգրված պարապմունքի կազմակերպումը ապահովում է երեխայի մտավոր, սոցիալական, հուզական, ֆիզիկական և գեղագիտական ոլորտների համակողմանի ու ներդաշնակ զարգացմանը:

Դա է պատճառը, որ ես կարևորում եմ այս պարապմունքների կազմակերպումը կարողունակահեն համատեքստում:

Գլուխ 1

Ինտեգրված պարապմունքների կազմակերպումը կարողունակահեն կրթական մոտեցման համատեքստում

«Մանկության ամեն մի օրը մի նոր բան է հայտնագործում շրջապատող աշխարհում: Ամեն մի նոր հայտնագործություն մարմնավորվում է որպես հեքիաթ, որի ստեղծողները երեխաներն են… Երեխային պետք է ծանոթացնել յուրաքանչյուր առարկայի մյուս առարկաների հետ կապելով: Երեխաների համար պատուհան բացեք դեպի շրջապատող աշխարհը: Կարողացեք երեխայի համար շրջապատի աշխարհում հայտնագործել որևէ նոր բան, բայց դա կատարեք այնպես, որ կյանքի այդ պատառիկը երեխաներին երևա ծիածանի բալար գույներով:»

Վ. Սուխոմլինսկի

Այս ինտեգրված պարապմունքները նպատակաուղղված են տարբեր մեթոդիկաների միջև գիտելիքների համակարգվածությանը, առարկաների կամ երևույթների ուսումնասիրմանը, ստեղծագործական երևակայության զարգացմանը: Այս ինտեգրված պարապմունքների կառուցվածքը պահանջում է նյութի հստակություն և տարբեր մեթոդիկանեի միջև տրամաբանական կապի ապահովում, որը կարող է իրականացվել պարապմունքի ընթացքում: Այս պարապմունքները պահանջում են հստակ մտածողություն և տրամաբանություն ուսուցման բոլոր փուլերում, որը նպաստում է կենտրոնացված ծրագրային նյութի յուրացմանը: Այս ինտեգրված պարապմունքները երեխային տալիս են լայն ու վառ պատկերացումներ շրջապատող աշխարհի մասին, որտեղ նա փոխհարաբերությունների մեջ է երևույթների և առարկաների հետ, կապված բազմաթիվ նյութական ու գեղարվեստական մշակութների հետ: Այստեղ հիմնական շեշտը դրվում է գիտելիքի յուրացմանը և ստեղծագործական զարգացմանը: Նախադպրոցական կրթության հիմնական նպատակն է՝ ապահովել երեխայի մտավոր, սոցիալական, ֆիզիկական, հուզական և գեղագիտական ոլորտների ներդաշնակ և համակողմանի զարգացումը:

Երեխայի դաստիարակության հարցում կարևոր է խաղի դերը, ուսուցման ընդհանուր զարգացման գործում: Ըստ հայ մեծանուն բանաստեղծ Հովի. Թումանյանի, որը գտնում էր, որ խաղը երեխայի «բնական, օրգանական պահանջն է, նրա լրջությունը և էությունը: Խաղն ու պարապմունքը միաժամանակ լրացնում են միմյանց ուսումնական գործընթացում, որը արդյունավետ է նախադպրոցական լայն տարածում գտած ինտերակտիվ մեթոդը: Ինտեգրված պարապմունքներն արդյունավետ են, երբ անցկացվում են խաղային մեթոդներով: Ըստ Մ. Մոնտեսորիի՝ «Այն խաղը, որն ուսուցանող չէ՝ դատարկ խաղ է:»

Մանկապարտեզում կարևորվում է ինտեգրված պարապմունքների դերը, որտեղ ուսուցանվող նյութը լրացնում է խաղի միջոցով: Ինտեգրված պարապմունքը չի կենտրոնացված միայն մեկ առանձնացված ոլորտի վրա, որտեղ պարապմունքի ընթացքում երեխան ստանում է բազմակողմանի գիտելիքներ: Պարապմունքի թեման ընտրելիս դաստիարակը պետք է հաշվի առնի պարապմունքի կարևորությունն ու հագեցվածությունը: Ինտեգրված պարապմունքների ժամանակ տրվող քննարկումները, զրույցները, խաղերն ու վարժությունները երեխային օգնում են լինել ակտիվ, ուշադիր և զգոն:

Այս պարապմունքը դաստիարակին օգնում են երեխայի մեջ դաստիարակել որակներ, որոնք անհրաժեշտ են հասուն տարիքում: «Ինտեգրում» - լատիներենից թարգմանաբար նշանակում է՝ վերականգնում, համալրում, մասերի միավորում ամբողջի մեջ: Ինտեգրված պարապմունքի համար կարևոր է նյութի ընտրությունը, ոչ բոլոր պարապմունքը կարելի է անցկացնել ինտեգրված մեթոդներով: Այսպիսի պարապմունքներ ուղղված են տարբեր մեթոդիկաների միջև կապերի դրսևորմանը, առարկաների համակողմանի ուսումնասիրման և գիտելիքների համակարգվածությանը, ստեղծագործական երևակայության զարգացմանը: Ինտեգրված ուսուցման ծրագրերը կազմվում են այնպես, որ մի առարկայից գիտելիքները հիմնվում են մի քանի այլ առարկաներից վերցրած գիտելիքների վրա, միասին սերտորեն փոխկապակցված ամբողջություն են: Անհրաժեշտ է միևնույն թեմայի բովանդակության շուրջ կառուցել ինտեգրված պարապմունք և հստակեցնել առաջադրանքը պարապմունքի յուրաքանչյուր փուլում: Ինտեգրված պարապմունքն ուղղված է թեմայի ամբողջական բացահայտմանը գործունեության տարբեր ձևերի կիրառմամբ՝ խաղ, աշխատանքային գործունեություն, կերպարվեստային

գործունեություն, պարապմունքներ: Ինտեգրված պարապմունքին նախապատրաստվելիս դաստիարակը կարող է օգտվել ինտելեկտուալ քարտի մեթոդից, որը տրամաբանական սխեմա, որտեղ արտացոլվում են հանգուցային հասկացությունը կենտրոնում, իսկ օժանդակ հասկացությունները՝ հանգուցային հասկացության շուրջ: Ինտեգրված պարապմունքին առաջադրվող թեմաներն են «Ջուր», «Տարվա եղանակներ», «Հաց» և այլն:

Գլուխ 2

Ինտեգրված պարապմունքի կազմակերպումը, որպես ճանաչողական, իմացական, սոցիալ հուզական ոլորտների զարգացման միջոց

Պարապմունքի ընթացքը

Թեման՝ «Արև»

Նպատակը՝ - Երեխաներին տեղեկացնել բնության մեջ, մեր կյանքում արևի կատարած դերի մասին (արևը որպես լույսի ու ջերմության աղբյուր):

- Երեխաների խոսքի մեջ ակտիվացնել համեմատությունները (բնությունը նկարագրելիս):
- Զարգացնել երեխաների մտածելու, ստեղծագործելու կարողությունները:
- Զարգացնել երեխաների խոսքը:

Խթանման փուլ – Ունկնդրել փոքրիկ հեքիաթ արևի մասին:

Արևն ասաց՝

- Ո՞վ է սիրով ինձ սպասում,
- Ո՞վ է ինձնից շողեր ուզում:
- Ես՝ եմ ուզում, ասաց ծիլը:
- Ես՝,- ձայն տվեց արագօլը…

Դաստիարակ՝ - Իսկ դուք սիրու՞մ եք արևը: Ինչու՞:

- Երբ է արևը դուրս գալիս զբոսանքի, ինչպես՞ (առավոտյան, թե երեկոյան):
- Երբ է մայր մտնում, ինչպես՞:
- Ինչ կլինի եթե արևը չծագի:

Երեխաները սիրում են արևը և նրան կանչում են երգելով: Լսում են երգի բառերը, իսկ հետո երգը:

Արև՛, արև՛, եկ՛, եկ՛,
Ձիզի քարին վեր եկ,
Սև, սև ամպեր հեռացեք,
Արևին ճամփա տվեք:

Երեխաներն անգիր սովորում են բանաստեղծության առաջին քառատողը, որից հետո սովորում են երգը:

Իմաստի ընկալում

Երաժշտություն՝ Երեխաները լսեցին երգը մի քանի անգամ, կատարելով պարային շարժումներ: Երաժշտական դաստիարակը բացատրեց երգի բառերը:

Երգը շատ դուր եկավ երեխաներին, կրկներգը կատարում էին գրեթե բոլորը:

Ֆիզկուլտդադար

Երեխաներ՛, փորձե՞լ եք արևի շողքը բռնել: Ինչպես՞: Բոլորդ բացեք ձեր ձեռքերի ափերը և փորձեք որսալ արևի շողիկը՝ լույսի փայլը: Ին՞չ զգացիք: Իսկ հիմա արևային նապաստակը շարունակ կփախչի ձեզանից, դուք պետք է բռնեք նրան:

Ապլիկացիա

Նյութեր՝ մկրատ, սոսինձ, գունավոր թղթեր, փորձաթուղթ, թաց անձեռոցիկ:

Պարապմունքը անցկացվեց խմբային մեթոդով: Երեխաները յուրաքանչյուրը կտրեց մեկ ճառագայթ և փակցրեց շրջանին, ստանալով ամբողջական արեգակ:

Դաստիարակը նախապես բացատրեց, թե ինչ հեռավարությամբ պետք է փակցնել ճառագայթները և նշեց, որ ճառագայթները կարող են լինել տարբեր երկարության:

Նախկին պարապմունքներից երեխաները արդեն տիրապետում էին մկրատից և սոսնձից օգտվելու հմտություններից և կարողություններից, ինչի արդյունքում ամբողջական արևը ստանալը կատարվեց հեշտությամբ, կոկիկ ու մաքուր:

Այստեղ փոքրերին օգնության կարիք կար, քանի որ դժվարանում էին բռնել մկրատը ճիշտ:

Ծեփակերտում

Երեխաներին բաժանվեց գունավոր պլաստիրին: Դաստիարակը ձեռքի շրջանաձև շարժումներով ցույց տվեց, թե ինչպես պետք է ստանալ գունդ, ինչպես պետք է մատների ծայրով հարթեցնել գունդը:

Ապա բացատրեց, որ ճառագայթները պետք է ստանալ ձեռքի ափերով, պլաստիրինի գլանման մեթոդով:

Երեխաները ծանոթ էին պլաստիրինով աշխատելու բոլոր մեթոդներին, ինչը նպաստեց, որ բոլոր շարժումները կատարվեց ճիշտ և երեխաները ստացան համաչափ ճառագայթներ:

Այս պարապմունքին ևս փոքրերին օգնելոի կարիք կար, քանի որ դժվարանում էին:

Կշռադատման փուլ

Այս փուլում պարզվեց, թե ինչ զգացողություններ առաջացան երեխաների մեջ, ինչ գույներ օգտագործեցին ապլիկացիայի և ծեփակերտման ընթացքում և ինչ նոր բան սովորեցին:

Դիտորդներ՝

Դաստիարակ՝ Լենա Գյուլզադյան

Պարապմունքն անց էր կացվում տարատարիքային խմբում (որն իր մեջ ներառում էր 3 տարիքային խումբ) դաստիարակներ Լիանա Պետրոսյանի և երաժշտական դաստիարակ Գայանե Ջիլավյանի կողմից:

Պարապմունքն ինտեգրված էր և իր մեջ ներառում էր 3 մեթոդիկաներ՝ երաժշտություն, ապլիկացիա և ծեփակերտում:

Թեման՝ Արեգակ

Նպատակը՝ Երեխաներին ծանոթացնել մեր կյանքում արևի կատարած դերի և օգտակար ազդեցության մասին: Երեխաների բառապաշարը հարստացնել նոր բառերով ու բառակապակցություններով, զարգացնել երեխաների մտածելու, ստեղծագործելու կարողությունները:

Դիդակտիկ նյութերը – Արևի նկարներ, որոնք պատկերում են օրվա տարբեր պահերը՝ արևածագից մինչև մայրամուտ, համակարգիչ, գունավոր թղթեր, սոսինձ, մկրատ, փորձաթուղթ, պլաստիրին, մոմլաթներ, թաց անձեռոցիկներ:

Տևողությունը՝ 30 – 35 րոպե

Երեխաների թիվը 21:

Ինտեգրված պարապմունքը հագեցած էր թեմատիկ դիդակտիկ նյութերով, ինչի շնորհիվ տարբեր ինտերակտիվ միջոցներով դաստիարակը ամփոփեց ամբողջ թեման՝ հաշվի առնելով յուրաքանչյուր տարիքային խմբի երեխաների կարողություններն ու հնարավորությունները:

Պարապմունքն իր կառուցվածքով բազմաբնույթ էր, հագեցած երաժշտական, խաղային, կառուցողական էլեմենտներով:

Առկա էր գեղեցիկ խթանման փուլ:

Ապլիկացիայի և ծեփակերտման պարապմունքների ժամանակ երեխաները աշխատում էին կոկիկ, զարգացնելով մատերի մանր մոտորիկան:

Ինտեգրված պարապմունքի ընտրված ձևը և կառուցվածքը նպատակային էր այնքանով, որ երեխաների համար ստեղծված էր համապատասխան միջավայր, որն էլ իր հերթին նպաստում էր, որ երեխաներն ավելի հաճույքով, ավելի ուշադիր և հետաքրքրությամբ ներգրավվեն իմաստի ընկալման փուլում:

Տնօրեն՝ Մարինե Գրիգորյան

Ինտեգրված օարապմունքի դիտում

Դաստիարակներ՝ Լիանա Պետրոսյան, Գայանե Ջիլավյան

Խումբ – տարատարիքային

Տևողությունը 30ր.

Կիրառված մեթոդիկաներ – երաժշտություն, ապլիկացիա, ծեփակերտում

Թեման՝ - Արեգակ

Դաստիարակի կողմից հետազոտվող թեմայի կարևորությունը մեծ է և արդիական նախադպրոցական կրթության մեջ, այն ամբողջական էր, երեխայակենտրոն, հագեցած և նպաստում էր երեխաների զարգացմանը: Պարապմունքի ամբողջ ընթացքում դաստիարակի հարցադրումները պարզ էին, հանձնարարությունը տրվում էր յուրաքանչյուր տարիքային խմբի համապատասխան: Պարապմունքը հագեցած էր նորագույն տեխնոլոգիայով, առկա էր արևի, արևածագի, մայրամուտի տարբեր նկարներ:

Թեման ընտրելիս դաստիարակը հաշվի էր առել թեմայի կարևորությունն ու հագեցվածությունը՝ բովանդակային առումով:

Երաժշտական պարապմունքից հետո ֆիզկուլտդադար էր, որից անմիջապես հետո սահուն անցում կատարվեց կերպարվեստային պարապմունքներին:

Ապլիկացիայի պարապմունքն անցկացվեց որպես խմբային աշխատանք, յուրաքանչյուր երեխա սոսնձեց արևի մեկ ճառագայթ, իսկ ծեփակերտումը անհատական պարապմունք էր, առկա էին մոմլաթներ, գունավոր պլաստիրին, մաքուր լաթեր և թաց անձեռոցիկներ:

Դաստիարակը հասավ իր նպատակին, քանի որ իր կողմից պլանավորված թեման ամբողջությամբ երեխաները յուրացրեցին:

Վերջնաարդյունք՝

Այսպիսով իմ համոզմամբ ինտեգրված ամփոփիչ պարապմունքներն առանձնահատուկ նշանակություն ունեն կրթական գործընթացում: Դրանք սովորական պարապմունքներից տարբերվում են այն առումով, որ այստեղ ամփոփվում, ամբողջացվում և ամրակայվում են անցած նյութի բովանդակությունը վերարտադրել երեխաների կարողությունները: Հետազոտության արդյունքում համոզվեցի, որ ինտեգրված պարապմունքները նպաստում են նաև երեխաների միջև խաղային և խոսքային փոխհարաբերությունների կայացմանը, ինչպես նաև հիշողության, իմացական և հուզական ոլորտների զարգացմանը: Ինտեգրված պարապմունքներն ապահովում են երեխայի ներդաշնակ զարգացմանը:

Պարապմունքներում կարևորվում են ինտեգրված պարապմունքների դերը:

Գրականության ցանկ

1. Ծննդից մինչև վեց տարեկան երեխաների զարգացման և կրթական չափորոշիչները 2018թ.
2. Կերպարվեստի, պարապմունքների կազմակերպումը մանկապարտեզի միջին խմբում
3. Ինտեգրված կրթություն Վիքիպեդիա
4. «Ինտեգրումը կրթական գործընթացում» - Փնջոյան Տ. – 2018թ.